իսկ դիմացը, ներքին եզրերին մէրէր՝ մայրեր, օղակներ, սրանց վրայից էլ զառ բալթա[6]: Թէվֆէրը վերջանում էին եռանկյունաձև հավելվածով՝ ալուստուավ, որի եզրերին կարված էր լինում զառ բալթա: Ալուստու-ի եզրերին կարվում էր սուրմա՝ բարակ խողովակիկներ, որոնք տեղ-տեղ երեքական կախված էին լինում եռանկյունի ձևավորված և եռանկյունու գագաթով ալուստու-ին ամրացրած: Այդ եռանկյունին կոչվում է ճուռ-ճուփ: Հարուստներն այնքան խիտ էին ճուռ-ճուփնէր շարում, որ նրանց ծայրերը կարելի էր լինում իրար հետ կարելով միացնել: Արխալուղի, ինչպես և մինթանայի և ֆուլֆի, կոնատակէրը դուրս էին կտրված լինում, որ սարին լինի, բռնի ոչ: Արխալուղը ունենում էր երկու կողմերից խորը գրպաններ:

4. Մինթանան հագնում են ամառն արխալուղի վրայից, գլխավորապես հյուր գնալիս: Ձևով շատ նման էր արխալուղին. նույնպես ուներ երեք փէշկ. նույնպես վերին մասը նեղ էր, ներքևինը՝ լայն: Եզրերին դրվում էր ոչ միայն ֆöբա, այլև զառ բալթա: Մինթանայի թէվֆէրը շատ ավելի երկար էին լինում, հագնողի բոյին՝ հասակին գրեթե բարաբար՝ հավասար և ավելի լայն: Թէվֆէրը չէին կարվում սկսած կոնատակէրից և միանում էին մինթանայի հետ միայն ուսագլխներին, իսկ թաթէրի մոտ ունենում էին ալուստուանէր: Թէվֆէրի կտրվածքների եզրերին, ուսագլխից մինչև ալուստու-ն երկու կողմերից շարվում էին զույգ-զույգ մեկ օղի մեջ ձգած և այդ օղով զգեստներից կախված դուգմանէր, իբրև երիզ կարված զառ բալթայի տակից: Ալուստու-ի վրա էլ կրկնվում էին ճուռ-ճուփնէրը: Գոտկատեղը կոճկվում էր ոսկե կամ արծաթե կոճակով՝ օնկն արած դրամով, բայց ոչ երբեք շափռաստավ:

5. Քուլֆը հագնում էին ձմեռը՝ հյուր գնալիս, անպայման կարմիր մախմուրից, Մրսկովի, որն ավելի թանկարժեք էր, կամ Թավրի գործ: Կրկնում էր մինթանայի ձևը, բայց ավելի լայն էր և ավելի հաստ էր միջած՝ բամբակած. աստառն ավելի թանկարժեք բամբակե կտոր կամ սատին էր լինում ուղած գույնի: Քուլֆի ֆöբան անպատճառ պիտի լիներ կանաչ դրէյից՝ 1—2 սմ լայնությամբ, ապա բավը՝ ֆöբայի առջևից դնում էին անպատճառ մորթի, մոտ 5—6 սմ լայնությամբ, հարուստներն ավելի լայն, տեղական դալայի և աղվեսի, կամ Մոսկվայից բերած սամուրի՝ սամույրի մորթուց: Մորթու տակ աստառը առաջ էր քաշված լինում և վրայի բամբակը փարթամացրած, որպեսզի մորթին ավելի ճոխ նստի ֆöբայից բարձր: Կոնէրին, արմունկից մինչև թէվֆէրի բերանը անպայման միևնույն մորթուց պետք է կարված լիներ: Մորթին չէր դրվում միայն վզի զոլին: Կարելի էր նաև հյուր գնալ ամառը ֆուլֆը հագին, այդպես էին անում նրանք, ովքեր լավ մինթանա չունեին:

6. Կöտի՝ գոտի վերջերս, մանավանդ ջահելները, կապում էին կաշուց՝ թոխկա՝ արծաթե կամ ոսկե զարդերով պատված, տեղական կամ Դաղստանի կուբաչիների գործ: Սովորականն ու հնուց պահպանվողը՝ մահուդվարի կարմիր կտորից էր, որն երկու անգամ փաթթում էին պորտի կլխավը՝ գլխով և մին տակ թուլմա՝ հանգույց կապում և ճրնդէրը՝ ծայրերը պորտից աջ և

---

[6] Քառակուսի տախտակների 8—12 հատ և բորի՝ թուրի օգնությամբ մեծ մասամբ մետաքսե, սակավ բամբակե թելով գործած ժապավեն: Պարզ սև թելով գործածից զանազանվում էր զառ բալթան, որի մեջ պարզ թելի հետ գցած էր և զառ թելը, այսինքն՝ արծաթաթելը մետաքսե կամ բամբակե թելի վրա ոլորած: Երկու տեսակներն էլ ծախվում էին մատուկնէրավ (МОТОК բառից):